



ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
 ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
 ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
 ՈՐՈՇՈՒՄ



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
 ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 3 ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ
 ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը.

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բժիշկների և բուժքույրերի կատարելագործման դասընթացների ուսումնական պլան-ծրագրերը» (կցվում է) (21-03-03-01).
2. Հաստատել ԵՊԲՀ շարունակական կրթության (կատարելագործում) ծրագրերի տարեկան պլանները (կցվում է) (21-03-03-02).
3. Հաստատել ԵՊԲՀ լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական ծրագրերի (բջջաբանություն Էխոսրտագրություն (սրտաբանների համար), ինվազիվ սրտաբանություն (սրտաբանների համար), ինտենսիվ թերապիա) ժամկետները և գները (կցվում է) (21-03-03-03).
4. 2020-2021 ուսումնական տարում կլինիկական օրդինատուրա ընդունված ԵՊԲՀ անվանական կրթաթոշակառու շրջանավարտների և գերազանցությամբ շրջանավարտների համար մեկ (1) տարի ժամկետով սահմանել ուսման վարձի



փոխհատուցման հետևյալ չափերը (21-03-03-04)՝

ա. ԵՊԲՀ անվանական կրթաթոշակառու շրջանավարտներ – ուսման վճարի 50 (հիսուն) տոկոսի չափով,

բ. ԵՊԲՀ գերազանցությամբ շրջանավարտներ – ուսման վճարի 30 (երեսուն) տոկոսի չափով.

5. 2020-2021 ուսումնական տարվա համար ուսման վարձը փոխհատուցել նախորդ տարիներին ընդունված հետևյալ կլինիկական օրդինատորների համար (21-03-03-05)՝

ա. Սվետլանա Սերգեյի Գասպարյան (անվանական կրթաթոշակառու) - 30 (երեսուն) տոկոսի չափով,

բ. Սոնա Արմենի Գալստյան (անվանական կրթաթոշակառու) - 30 (երեսուն) տոկոսի չափով,

գ. Հրաչյա Ստեփանի Աջամյան (անվանական կրթաթոշակառու) - 30 (երեսուն) տոկոսի չափով.

6. ԵՊԲՀ-ում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման գործողությունների ստանդարտ ընթացակարգը (կցվում է) (21-03-03-06).

7. Հավանություն տալ ԵՊԲՀ շրջանավարտների միություն ստեղծելու նախաձեռնությանը և կազմակերպական անհրաժեշտ միջոցների իրականացմանը(21-03-03-07).

8. Հաստատել «2020-2021 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-08).

9. Հաստատել «Ուսման վճարի չափերի մասին կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-09).

10. Հաստատել «Ուսման վճարի փոխհատուցման մասին կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-10).

11. Հաստատել «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-11).

12. Հաստատել «Ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնի աշխատակարգը» (կցվում է) (21-03-03-12).

13. Հաստատել Ռազմաբժշկական ֆակուլտետային խորհրդի նոր կազմը (կցվում է) (21-03-03-13).



14. Հաստատել «Ռազմաթշկական ֆակուլտետի պետի, դասախոսների մրցութային ընտրության առանձնահատուկ պայմանների մասին կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-14).

15. Հաստատել «Իրավաբանական բաժնի կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-15).

16. Հաստատել «Շարունակական մասնագիտական կրթության ուսման վճարների մասին» կարգը (կցվում է) (21-03-03-16).

17. Հաստատել «Հանրային առողջության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին կանոնակարգը» նոր խմբագրությամբ (կցվում է) (21-03-03-17).

18. Հաստատել «Գիտական խորհրդի կանոնակարգի» փոփոխությունը (կցվում է) (21-03-03-18).


19. Հաստատել «Առաջնորդենք ապագան 2» մասնագիտական կողմնորոշման ծրագիրը (կցվում է) (21-03-03-19).

20. Երաշխավորել տպագրության ներկայացված ուսումնական գրականությունը (կցվում է) (21-03-03-20).

21. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ